

տունքն իմ ոչ օգնին, ըստ առակաց Սողոմոնին, զոր դուշակեաց վա իմ անձին, թէ անձն չար անարժանին, շնորհաց արուեստ ոչ մտանին:

Եւ արդ զրաւ եղև սորին, ի Զերմաձոր Մոկաց թաղին, ձեռամբ անշնորհ մեղաւորին, ծոյլ և յիմար սուտ Գրիգորին, ընդ հովանեաւ զոյգ տաճարին, սրբոյ Փրկչին շաճածնին, ի սլար-նութի մերոյ գահին, նոր ամիսայ Միր Մահմատին, ի թլւականիս մերոյ աղգին, քսան և երկու յորելեանին, եռակ տաճնից և չորս քառին վերայ բարդեալ. Պ. թլւին: Այլ և ունիս Պ. անգին ակունս պահեալ յիւր ախնհի(ն), զբանս Պղընձէ ճոխ քաղաքին, և զարար (երկու կամ երեք տառ, կտրուած) ճպրհին, 228^ր զարարածոց զիրս Մովսին(ն), զո(վ?) | աննէս Թլգուբանցին ոտանաւոր չափեաց զնոսին, ախորժացոյց քաղցրագին: Եւ զպատահումն եղանակին բժան տանուաէրին և զիմաստնոց ժամանակին, հեղինացոց և յունաց աղգին, երբայեցոցն և քրիստոնին, զոր կազմութե գիրք ամացին, որք հանդիպիք այսքմ տառին, տուք ողորմիս ձեր ծառային, ինձ անիմաստ տ՛ր Գրգրին և կողակցոյն իմ նուբարին և ծնողացն իմ Սիրագին, Աւետիսին և Փաշային, Փափասուն(ն) զոյգ Ղարխոյ խոջին և Մալամին և Գրգրին և Խլղաթին, զոյգ խուռումին և թանաքի յորինողին և որք երախտիս . . . (մի բառ) ունին, նոցին լիցի մասն և բաժին:



ՇԱԳՈՒՆ ԲԱԳԲԱՏՈՒՆԻ

Ա.

Ս. Էջմիածնի միաբան Գալուստ Տէր Մկրտչեանի մահւան ցաւալի լուրը հաղորդելով, յայանուեց միեւնոյն ժամանակ, որ նա դաեղ է մինչև այժմ կորած Շաղուհ Բազրատունի սլաւամագիրը: Միաբան Գալուստը մեռաւ 1917 թ.ի Յուլիս ամսի 13-ին երբ Հայաստանը, թէև օղակւած օսմանցիների և թաթարների հորդաներով, Երևանի նահանգի մի փոքր մասում, Երևան քաղաքով անկախ էր յայտարարւած Թիֆլիզում նստած Աղգային Խորհրդի կողմից: Երևանը կտրւած բոլոր աշխարհից և սպասելով բուն կառավարութեան դալստեանը, տեղական Աղգային Խորհրդի որոշմամբ, կազմակերպեց ժամանակաւոր մի վարչութիւն, վեց անդամից բաղկացած, որի մէջ ես էլ մտայ իբրև դադթականական գործերի վարիչ: Այդտեղ լսեցի որ Գալուստը ծանր և մահամերձ հիւանդ է: Գործերս մի քանի օրով ուրիշներին յանձնե-

լով, եկայ էջմիածին՝ նրան տեսնելու, բայց հասայ երբ նրա դադաղը բնակարանից եկեղեցի էին տանում:

Հայ ժողովրդի վերջի աննկարագրելի տանջանքներին աղանառու և մասնակից, կարսից մինչև Ադեքսանդրապոլ, մինչև Ղարաքիլիսայ, մինչև Իլիջան, վարժած սոսկալի տեսարանների, մի տեսակ սառն էի նաև դէպի հանգուցեալի դադաղը, միայն երբ հետեւալ օրը նրան գերեզման իջեցրին, փղձուկս այլևս պահել չկարողացայ: Զգացի որ բաժանում է մեզնից և հայ իրականութիւնից նա, որ պատիւ է բերել իւր ծառայած հիմնարկութեանը և իւր ցեղին թաղամթիւ երոպացի ճանապարհորդների և մասնագէտների առաջ, մեռաւ մի անձն, որ իւր մտաւոր աշխատանքներում մեայուն գործեր թողեց հայագիտութեան ասպարէզում, որ իւր խորհուրդներով և իւր հմտութիւնով միշտ օգտակար է հանգիսացել էջմիածնի վանքին, երբ խորհրդի և առողջ մտքի կարիք է դգացել:

Հայութիւնը ապրում էր իւր ծանր օրերը: Մի շաբաթ անց երբ լօռայ լեռների վրայով, կեանքի վտանգով ու անասելի նեղութիւններով ի պաշտօնէ նրեանից Թիֆլիզ գնացի, իմացայ որ Գալուստի մահւան լուրն անգամ հայութեան այդ մտաւոր կենտրոնավայրը չի հասել և ես պիտի հանգցուցեալի եղբօրն ու հայութեանը յայտնէի, որ Գալուստ Տէր Մկրտչեանը այլ ևս չկայ:

Հայ կեանքը այժմ նորմալ ընթացք է ստանում. մենք առիթ կուենհնանք շուտով Գալուստի յիշատակին անհրաժեշտ էջեր նուիրել: Հաւատացած ենք, որ այդ պարտքը կկատարեն նաև հայ բանասիրութեամբ պարապող այլ անձինք: Այժմ դիմենք Շապուհ Բաղրատունու դիւտին:

Թիւրքահայ ազատւած ժողովրդի մնացորդի հետ աղատւել է նաև հայութեան հին յիշատականների մի մասը՝ Վասպուրականի և Մուշի ձեռագրերը, եկեղեցական անօթներ, դգեսաներ ևլն: Յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ, թողնելով իմ վերջին պաշտօնավայրը, վերադարձայ էջմիածին և վերսկսեցի տարիներից ի վեր իմ ընդհատած աշխատութիւնը շարունակել և լրացնել, Հայ ձեռագրերի ցուցակագրութիւնը: Յայտնի է, որ էջմիածնի բոլոր ձեռագրերը պատերազմի հետեւանքով, Սարիղամիշի կոիւնների ժամանակ, երբ կովկասը վտանգի ենթարկւեց, փոխադրւեցին Մոսկովա, ուր գտնւում են մինչև օրս: Դրա փոխարէն մատենադարան բերւեցին նոր ձեռագրեր աւերւած Թիւրքահայաստանից, ընդհանուր թւով 1525 համար: Շուցակագրութեան ժամանակամիջոցում, ամեն օր հանդստեանս ժամերին այցելում էի անկողնում պառկած Գալուստին, գրուցելու թէ

քաղաքական անցուղարձի և թէ ձեռագրերից ստացած հետաքրքիր նիւթերի մասին: Երբ ձեռքս ընկաւ այն ձեռագիրը, որի մէջ պահւած էր «Շապուհի պատմութիւնը», առանց իմանալու որ դա Շապուհինն է, Գալուստին պատմեցի հետաքրքիր բովանդակութիւնը և նա խնդրեց Զ-ը իրեն տանել: Տարայ իրեն և փոքր յետոյ իրրեւ էջմիածնի Ազգային Խորհրդի անդամ, սրա յանձնարարութեամբ գնացի Աղէքսանդրապօլ, Կարս, Թիֆլիզ, մի կողմ թողնելով գրական զբաղմունքներս. յետոյ առանձին ուրախութեամբ տեղեկացայ, որ Գալուստը իմ նրան տուած ձեռագրում ի յայտ է ածել կորած Շապուհ պատմադրին: Գալուստը արտագրել է ձեռագրի թղ. 34^F—85^F էջերը, սկզբի 34 թերթը թողնելով անուշադիր: Նա իւր ձեռքով արտագրած թերթերի վրայ ծանօթութիւն չունի թէ նա ինչ հիման վրայ առաջի մասը գուրս է ձգել:

Բ.

Նախ տանք Զ-ի նկարագրութիւնը: Զեռագրի համարն է 319. բերւած է Լիմ անապատից, թղ. 1 ունի կնիք անապատի: Դիրքը փոքր է, կաշէկազմ, 195 թերթ, նորագոյն թղթի վրայ, 16×10, միասիւն—նօտրգիր, շղաղրին մօտ 21 և 16 տողերով վերնագրերը կարմրով: Զ-ը բաղկացած է երկու մասից. թղ. 1—85 մեզ հետաքրքրող հատուածն է, թղ. 86—193 Արրահամ Կրեատացու պատմութիւնը: Տարրեր են դրիչները բայց ժամանակով իրարից ոչ շատ հեռու. առաջի մասի թուղթը աւելի հաստ է և կոշտ, երկրորդինը բարակ, ողորկ և փայլուն:

Արրահամ Կրեատացու պատմութեան վերնագիրն է՝ Վիսպանութիւն պատմութեան վասն դալստեան իմոյ ի սուրբ էջմիածին: Եւ վասն վախճանի Արրահամու սրբազանի կաթուղիկոսին Բաղիշեցոյ գիտին Տարօնոյ՝ ևլն:

Վերնագիրը և հետեւեալում այս օրինակը նման է Կալիաթայի 1796 թւի տպագրութեանը:

Մեզ հետաքրքրող առաջի մասը պահւած է շատ խեղճ վիճակում. կազմը նոր է, անկազմ, Զ-ը մաշւած է, անմաքուր, սկզբից թղ. 1—10 վերևի անկիւնը եղծւած, մասամբ բնագիրը թերի, կրկին կազմողը փնասւած անկիւններին թերթիկներ է կպցրել: Զ-ի այդ մասն ունի առանձին տետրահամարներ, միայն անկանոն և անյարիր—այսպէս. Զ, Բ, Գ, Դ, Ե, Զ. է, Ը, և ԺԲ: Այդ տետրահամարները ոչ մի արժէք չունին: Կրկին կազմողը թերթերը յետ ու առաջ է տարել, Գալուստը արտագրութեան

ժամանակ կարգաւորել է ըստ բովանդակութեան և ծանօթութիւններ տուել:

Գալուստը 2-ը համարում է՝ հին մասը ժէ դարուց, մենք դնում ենք ժէ—ժԹ: Երկրորդ մասը յիշատակարան չունի, բայց թղ. 195^բ նոյն գրչի ձեռքով գրւած է այս տեղեկութիւնը «—եղև յայտնիլ սրբոյ նշանին որ ի Վարագ սուրբ նշանի յեկեղեցոյ շինման, 1264 մայիսի շաբաթ աւուր որ կիւրակէն էր տօն երեման խաչին, և այս սուրբ նշանս ոչ թէ առաջին, որ աւագ սուրբ նշան ասի, և տօն կատարի անուն նորա, Վարագայ խաչի այլ յետին ժամանակիս յայտնի սուրբ նշանս որ ըստ կարծեց գետարգելն է, բայց յետոյ ըստուգեսցուք»:

Տեղեկութիւնը 1264—1815 թուիցն է, 2-ի այդ մասը կարող է մի փոքր առաջ գրուած լինել, իսկ առաջի մասը, այն է Շապուհ Բագրատունին, գրւած մի այլ գրչի ձեռքով, գրութեան ձևով ժէ-ից հին չէ: Երկրորդ գրիչը հինը վերցրել է և ի մի կազմել տուել իւր արտադրած Արրահամ կաթուղիկոսի պատմութեան հետ:

Ինչ էր գրքի վերնագիրը և որքան է թերի մասը, ասել չենք կարող: Սկսւում է այսպէս ...եալ ջահս մոմեղէ(նս և սար) կաւադունս իւր մի(այնակեացս) և եկեալ ի տեղին ուր էր Մահ(մէտ). Եւ շուրջ դնովաւ արեալ մեծալձայն բարբառէին և անկարծակի դարդեան արք վաճառականք դարհուրեցան և յարուցեալ գնացին»: Մահմէտի պատմութեան շարունակութիւնն է. սկիզբը թերի:

Թղ. 2^ա. Յատուկ վերնագրով, կարմրով Պատմութիւն յաղագս Մուրիկայ քաղաւորին Հոռոմոց. Յետ այսորիկ մեռաւ Մուրիկ:

Թղ. 4^բ. Պատմութիւն Հեռակէսի քաղաւորին Յունաց, (Ա.)պայ Հեռակլ արքայն (յուն)աց միաբանեայց դամենայն յերկիրն Ֆրանկաց. յունաց և հայոց... (վերնագիրը կիսով չափ կտրւած է):

Այս երկուսից բացի այլ ևս ոչ մի վերնագիր չկայ. այլ գրւած է առանց որ և է բաժանման. միայն թղ. 29^ա. կիսով չափ է գրւած, թղ. 29^բ. անգրել է. թղ. 46^ա կիսից մինչև 48^բ դարձեալ անգրել. թղ. 47^ա. կէս էջ 8 տող գրչափորձութիւն:

Դ.

Պատմութիւնը գրւած է ռամկախառն լեզուով, ունի այնպիսի դարձուածներ, որ մեր և ոչ մի պատմագրի մօտ չենք հանդիպում, իսկ ամբողջը իսկապէս առասպելների ժողովածու է

և կրում է վերին աստիճանի ժողովրդական պատմաժամանակների բնույթ:

Թէ ինչպէս էր սկսում պատմութիւնը մենք չգիտենք, չգիտենք թէ որքան է սկզբից թերի, պակասում է նաև վերջի մասը: Մեր ձեռքը հասած պատմութեան բովանդակութիւնը այս է:

Նկատորական մոնոդոն Սարգիսը իւր տեսած երազը պատմում է ինչ որ վաճառականների, թէ Մահմետը—մարգարէ է մեծ և զոր ինչ ասէ ճշմարիտ են բանք գորա: Պարսից ճապասպ ֆասրէ թագաւոր լսելով այդ մասին, կամենում է Մահմետին սպանել, բայց Մահմէտն ու Ալին առնելով իրենց հետ ֆատմային, հեռանում են Բարեկացւոց աշխարհը և շինում են Բաղդատ քաղաքը:

Մեռնում է Մուրիկ արքայն Հրոմոց և նախ էր աշխալ Զաքարան քուրն Գասրէյին, արքային Պարսից: Հայազգի Մորիկը յոյների թագաւորը դառնալով, դեսպաններ է ուղարկում իւր հայր Դաւթին իւր մօտ հրաւիրելու: Պարսիկական հայրը դեսպաններին տանում է պարտէզ և նրանց ներկայութեամբ կտրտում մեծմեծ «բանճաւը» հանում է և խնամում փոքրերը, դեսպաններին պատուիրելով վերադառնալ և որդուն պատմել տեսածները: Մուրիկը հասկանալով հօր ցուցմունքը, կոտորել է տալիս մեծերին և առաջ քաշում փոքրերին: Նա շինում է Երուսաղէմ քաղաքը, եկեղեցին պարսպով շրջափակում, որ աւերել էր Վաղէսը: Հայաստանի վրայ նշանակում է Մաղաղ ոմն,—այր չար և անաւրէն, նա շինեաց դամբոցն աշաֆն Խորիան դիտոյ, որ կոչեաց զնա Մախազի բերդ:

Հերակլէսը սպանել է տալիս Մուրկին և թոքն անցնում նրա տեղը: Քասրէ մի տարի շարունակ յարձակումներ է գործում և «անպատ արար գերկիրն յունաց ի մարդոյ և ի յանասնոց»:

Հերակլ թագաւորը զօրք առած դալիս է «Թէոդուպուլիս», որ է Կարնոյ քաղաք և սկսում է նրա վերաշինութիւնը: Կոստանդին անունով մի նախարար խոստանում է զնալ Պարսկաստան և գտնել Քրիստոսի խաչը, որ գերի էր տարել Քասրէն:

Երբ Հերակլը իմանում է խաչի տեղը, զօրքով գնում է ընդհանուր ճանապարհին նրան ընձանկերով ընդառաջում է Սիւնեաց Բիւրեղ Տիկինը և երբ կայսրը խաչն առած վերադառնում է, ստանում է նրանից մի կտոր սուրբ փայտից և «ի դաշտին որ Հացիւն ասեն» շինում է եկեղեցի խաչի համար:

Այդ է Հացունեաց խաչը:

Հերակլը սուրբ խաչը տալիս է իւր Կոստանդին և Թէոդաս

որդիներին՝ և ուղարկում է Երուսաղէմ նախկին տեղը զննելու։ Որդիները Երուսաղէմ չհասած, լսում են, թէ առաւ յԵրուսաղէմ յապատամբին Մահմետոյ։ Իսկ քաղաքը նրան էին յանձնել հրէաները, երբ Հերակլը զրադւած էր պարսից կռիւներով։

Մահմէտ ահա՛ զԴարսիս ի Կիլիկեցւոց և զԱդանայ և Մսիս և զԱսիայ և զԱնտիոք և զՄելիտենի։ Աղէքսանդրիա և Կոչեաց զանուն նորա Մոր զԴարսիս և զԴունդն որ է Խորասան... և ընդ հարկաւ արար զամենայն Հայք։ Եւ Նր ի սլաւական հայոց տէրն Մամիկոնէից Վահան, և Կացոյց հարկաց պահանջաւ եւ տային ամենայն տունս հայոց։ Բ. դահեկան և տունն Վասպուրականի։ Ի. Բ. դահեկանաւ։

Մահմետ ապրում է ԿԸ տարի։ Նրան յաջորդում է Իբրահիմ Ապուլպաքը ամս Ժ. ապա Ամր։ Մեռնում է Հերակլ և նրան յաջորդում է Լևոն։ Սորա դէմ պատերազմ է գալիս Մահմետայ որդի Ահմատը, որի զօրքը հասնում է Կ. Պօլսի դռներին, բայց նաւատորմիղը Ս. Խաչի զօրութեամբ փոթորիկի հանդիպելով, ամբողջովին խորտակւում է։ Այս Ահմատը յարձակւում է նախապէս Դարբանդի վրայ, անցնում է Ալանաց դուռը, բայց Ալանները շարաշար քարդում են և խորտակում նրա ոյժերը։ Ահմատի երրորդ յարձակումը լինում է Հայաստանի վրայ, մտադրւած սրով և կրակով ոչնչացնել ամբողջ երկիրը։ Նախարարների խնդրանք նրան ընդառաջում է Սահակ կաթուղիկոսը Համազասպի հետ, թի տանէն համակարին։ Սահակը Ահմադին չտեսած, երբ զգում է մահւան մօտենալը, նամակ է գրում նրան։ Ահմատը կարդալով մեռած՝ կաթուղիկոսի նամակը, Հայաստանին ոչինչ փաստ չհասցնելուց դատ, երեք տարւայ հարկն էլ ներում է։

Ամրին յաջորդում է եղբորորդին Ապու Ալի։ Հայաստանին տիրում է Թեոփոս Ռեաուճի ի տանէն Մանանդի, Խէ տարի։ Սա դադարում է յոյներին հարկ տալուց, և տալիս է տաճիկներին, որովհետեւ— «զաւրացաւ տուն պարսից և յաղթահարեաց զտուն Բաղդատայ և Հարմիզդ Պաքար թագաւորեաց ի տունն Պարսից»։ Պարսիկները սկսում են յարձակումներ Հայաստանի վրայ։ Թէոփոսը անկարող դիմադրելու, հիւանդանում է և կանչում իւր որդի Վարդ պատրիկին և երդեցնում նրան թողնել յոյներին և հարկ տալ Պարսիկներին և հաշտւել սոցա հետ։

Յոյները պատերազմ են սկսում Պարսիկների դէմ, Վարդ պատրիկը ձեանալով բարեկամ յոյներին, դաւաճանում է և պատճառ դառնում, որ պարսիկները սոցա շարաշար քարդում են և շատերին կոտորում անխնայ։ Վարդ պատրիկը երազ է տեսնում. — «զի լինէր ինքն ի մէջ արեան ծովու և կախած երկաթ ծանր

ընդ ոտիւք իւր և քարշէին զնա դէպի վայր յանդունդս»:

Կանչում է Արտուս—(Զ.ում Տորոս) լեռան վրայ ճգնող Սիմէոն անունով մէկին, որ յորդորում է եկեղեցիներ շինել, որպէսզի ապաշխարութեամբ ներումն ստանայ: Եկեղեցիները տալիս է շինել յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային—«ի բերդեր ի գեղեր, զի անխաբան լինիցի յիշատակ պատարագին»:

Իսկ Սիմէոն ճգնաւորը գնում է Երուսաղէմ և այնտեղ ստանում մասն սրբոյն Ստեփաննոսի և բերում Վասպուրական: Պատրիկը տեսնում է նոր հրազ.—«քահանայք իրրև .Ռ. որչափ և համարք եկեղեցեացն էր. զի բռնէին զերկոսին ձեռք նորա և միայնկեցն Սիմէոն կտրեաց շղթան ի ոտիցն և քնկենոյր ի խորս ծովուն»:

Սորա օրով ԲՃ Թուին այայտնեցաւ սուրբ խաչն որ ի Վարագ լեռան»:

Այսքանով վերջանում է այն մասը, որ Գալուստը աչքաթող է արել, Շապուհի պատմութիւնը համարելով շարունակութիւնը միայն, թէև այդպիսի անջատման մասին Զ-ում և ոչ մի նշան չկայ: Զ-ում թղ. 34^ա վերջի տողն է.—«Ի Վարագ լեռան, և էր թվականն հայոց». թղ. 34^բ.¹ «ԲՃ և կացեալ պատրիկն ամս Զ. և վախճանեցաւ»:

Մեր նկարագրած հատւածը, բացի Մահմետի պատմութիւնից սկզբում, փոքր փոփոխութիւններով մտել է Մովսէս Երզնկացու Ոսկեփորիկ ԶԶ-ի մէջ. այս վերնագրերով.

Ոսկ. գլ. ԼԹ.—«Պատմութիւն սուրբ Խաչին որ Հացունեաց կոչի, և թէ որպէս դարձաւ ի Պարսից, սուրբ Խաչն աստուածընկալ յորմէ ընկալաւ Բուրեղ»¹):

Գլ. ԼԹ.—«Պատմութիւն սուրբ Խաչափայտին Քրիստոսի, թէ որպէս տարաւ Հերակլ արքայ ի Թաւրիզոյ ի Կոստանդինուպաւլիս»:

Գլ. Խ.—«Պատմութիւն դալստեան Մուհամատին ի Հայս և գնայ ընդդէմ նորա Սահակայ սուրբ եպիսկոպոսին»²):

Կասկածից կարելի է դուրս համարել, որ Երզնկացին իւր

1) Հացունեաց Խաչի պատմութիւնը սովորաբար գտնւում է նաև ձառընտիրների մէջ եւ տպագրւած է Արարատ 1888, 399—404, փոքր ինչ տարբեր քան Երզնկացու եւ մեր Զ-ի քնադիրը: Հմմտիր Տաշեան ցուցակ, 494 եւ 382:

2) Մովսէս Երզնկացին, Դէորդ Սկեւռացու նշանաւոր աշակերտը, կազմել է Ոսկեփորիկ ժողովածու.—«Եւ նմանապէս երիցս երանեալ սուրբ վարդապետն Մովսէս Երզնկացին. ի յամենայն զրոց ժողովեալ զլաւն եւ

Ոսկեփորիկը կազմելիս ձեռքի տակ է ունեցել մեր Ձ-ի պատմութիւնը, որից նա յաջորդաբար, շատ փոքր փոփոխութիւնով, ընդօրինակել է վերև առաջ բերած հատւածները, իւր կողմից վերնագրեր տալով:

Անցնենք երկրորդ մասին: Գալուստը արտագրել է մատիտով, Ձ-ի անվերջ սխալները սրբադրել, ծանօթութիւններ տւել և վերջում խիստ համառօտ նկարագրել Ձ-ը: Բացի այս նա ամբողջը բաժանել է 131 հատւածների: Արտագրութիւնը կատարել է 61 թերթի մի երեսի վրայ, 60-րդ թերթի վրայ, դողդողացող ձեռքով գրել է այս ծանօթութիւնը. — «Այստեղ վերջանում է Սմբատ Բագրատունու առաջին մասի պարբերութիւնը որ հիմնուած է» ...:

Գալուստի վերջի գրութիւնն է կեանքից հրաժեշտ առնելուց առաջ:

Երկրորդ մասի բովանդակութեան մասին պիտի նախապէս ասեմ, որքան Հացունեաց և յարակալ պատմութիւնները լի են առասպելներով, երկրորդ մասի հետ համեմատւել չեն կարող: Ամբողջը գրւած է այնքան հեքիաթաման, որ ընթերցողը կարծում է թէ իւր առաջ բուն ժողովրդական հեքիաթների ժողովածու է:

Վարդ պատրիկը մեռնում է ութսուն տարեկան հասակում: Նրա յաջորդ Մուշեղը անկարող եղաւ հօր իշխանութիւնը ձեռին պահելու: «Հայք ոչ կամեցան զտէրութիւն տանն Մանածի և բաժանեցին զաշխարհն հայոց ի մէջ Բագրատունեաց և ի մէջ Արծրունեաց... զհիւսիսոյ դէնն տուն Բագրատունեաց, որ երանունն նորա Բաւրատ, զՎասպուրականի դէնն տուն Արծրունեաց»:

Արծրունի իշխաններն էին երկու եղբայր՝ Գագիկ և Սմբատ: Գագիկն ունենում է երեք որդի, Աշոտ, Գրիգոր և Համազասպ:

զգեղեցիկն, եւ ի միում տփի եղեալ, եւ կոչի անուն սուրբ գրոցս Ոսկեփորիկ: Քանզի քան զամենայն ոսկի եւ արծաթ եւ ակունս պատուական է սա եւ զեղեցիկս:

Այդ ժողովածուն ունի իր մէջ 420 գլուխ, եւ, ի նկատի ունենալով հեղինակի կամ ժողովողի ժամանակը, կազմել է ԺԳ դարու վերջում: Նրկնկացու մասին տե՛ս Սխուանն 403—405, ուր ասուած է նրա ներքողեան—Աղբը իւր ուսուցիչ՝ Գէորգ վարդապետին նուիրւած, Ջարբանալեան, Պատմութիւն Հին զպրումեան տպ. Գ. 722. իմ ռուսերէն՝ Պատմութիւն Սուրբ գրոց Հայերէն Պարզամանութեան, էջ 108—117, եւ Նիւթեր Ս. Գրքի ուսումնասիրութեան, I. էջմիածնի Թ. 153 ծեռագիրը, Արարատ. 1904, հ. 2—3:

Սոցա, որի չի աւաժ, որդին էր Աշոտ։ Աշոտն ունեցաւ երկու որդի Գաղիկ և Սահակ։ Սահակը պսակւած էր Աշոտ Բագրատունու դուստր Սմայատունու հետ և չունէին որդի։ Ինչը մարդուն յորդորում է գնալ ուխտ «յանապատին Աշոյ» վանահայր Գրիգորիոսի աղօթներին աղաւինելու։ Դնում են ուխտ, տանում են շնորհիւ սպիտակս և գառինս սպիտակս։ Խոստանում են արու զաւակին նուիրել վանքին։ Սմրատունին մի տարի անց ունենում է արու զաւակ։ Անունը դնում են Գրիգոր և յանձնում վանահօրը։ Սահակը որդւ աճուան վրայ աւելացնում է Դերէն անունը—տը կոչի որդի վանաց։

Դերէնը մեծանում է վանքում։ Երեսուն տարեկան հասակում վանահօր քոյրադուստր զեղեցիկ աղջկան որ էր «հագուցեալ զգետ հաւատաւորի», ոսպ քաղելու ժամանակ, «անկարծախի կալաւ գնա և բռնդատեաց և արար կամաց իւրոց»։ Վանահայրը խնդրում է Սահակ իշխանին առիւծի կորիւնին հեռացնել գառներից։ Հայրը որդուն առնում է վանքից և նրան ամուսնացնում Սիւնեաց իշխանի դստեր հետ։

Դերէնը ունենում է մի որդի Աշոտ, իսկ սա երեք որդի, Գրիգոր—Դերէն, Գաղիկ և Համազասպ։

Երեք եղբայրները հօր իշխանութիւնն ու ստացւածքը բաժանում են հաւասար մասի։ Մեծը Դերէնն էր «այր առատ և զուարթ, որ ոչ նման էր նմայ այլ մարդ ի վերայ յերկրի»։ Նա ունէր մի հաւատարիմ ծառայ շի տանէն Գնունեաց և անուն նորա Գորգ—Ջաֆրան։ Դերենի բաժինն էր Վանը։ Նա ամեն օր ճաշին գնում էր շի մոյտան Վանայ, ինքը նստում էր սեղան և բոլոր անցուդարձ անողներին հրաւիրում սեղանի։ Շուտով կորցնում է իւր կարողութիւնը, բերդերը ծախում է իւր եղբայրներին և շարունակում իւր հիւրասիրութիւնն ու զուարճութիւնը։ Ի վերջոյ մնում են միայն իւր և իւր Ջաֆրան ծառայի զգեստն ու ձիերը։ Մախում է նաև իւր ձին ու զգեստները և պատրաստում վերջին ճաշի սեղանը։

Ահա այդ ժամանակ նրա ծառան բերում է մի վիրաւոր տաճիկ մարդու, Բաղդատի թագաւորի որդուն։ Դերէնը գիտէ տաճիկերէն, խօսում է հիւրի հետ, կերակրում է և խնամում։ Հիւրը պատմում է, որ իւր թագաւորութիւնից զրկւած և ճանապարհին վիրաւորւած, գնում է Խորասան այնտեղի թագաւորից, իւր քրոջ մարդուց՝ օգնութիւն ստանալու։ Նա լսել է Դերէնի անունը, եկել է նրան դիմի, որ իրեն հասցնի Խորասան։ Եւ հիւրընկալը յայտնում է, որ ինքն է Դերէնը, տալիս է նրան իւր վերջին ձին և զգեստը և ճանապարհ ձգում։

Տէր և ծառայ ամեն ինչից զրկւած, գնում են բախտ որո-

նկու օտար աշխարհներում: Համարում են Մօսկ քաղաքը, Երեք նշանաւոր քաղաքացիներ, նոյնպէս հիւրասէր, եւր հարց ու փորձից տեղեկանում են, որ իրենց հիւրերը Դերէնն ու Ջաֆրանն են, մեծապէս հիւրասիրում են և առատ ընծաներ տալիս: Դերէնը ընծաները թողնում է նուիրողներին ի պահ և գնում Բաղդաատ: Մոյգանում թաղաւորը ճանաչում է դոցա, ութ օր հիւրասիրում է իւր պալատում, ապա հրաւիրում իւր բոլոր մեծամեծներին, «առ դրածակն ի ձեռն» և յայտնում է թէ Դերէնն է այդ անծանօթը՝ իւր բարեբարը: Դերէնը նոր ճանաչում է Բաղդաատի թաղաւորին, որից ստանում է մեծ ընծաներ, նաեւ բոլոր քաղաքացիներից և օտար գօրքի օգնութեամբ վերադառնում է Վան, տիրում իւր և եղբայրների իշխանութեանը:

Շարունակում է երկուսի բարեկամութիւնը: Դերէնը ընդարձակում է իւր իշխանութեան սահմանները, նոր բերդեր է շինում և երկիրը խաղացնում: «Եւ էառ Դերէն կին զՍոփի, դուստր Բագրատայ կռապաշտի», որից ունենում է երկու որդի և մի դուստր: Սորան կնութեան է տալիս «Դրիգ»-ի Պատրիկին Բախատունեաց:

Բաղդատում մեռաւ Ալի արքայն, «այն որ սիրէր զԴերէնն» որին փոխարինում է Մահմետ, «այր պիղծ և շար»: Սա պատերազմ է սկսում Դերէնի դէմ բայց յաղթում է շարաշար:

Պատմականն ու առասպելականը այնպէս են իրար հետ ձուլւած, որ դժուար է սահմանները գտնել: Դերէնի պատմութիւնը, հայկական հեքիաթների ծրագրով, մի գեղեցիկ ամբողջութիւն է:

Դերէնին յաջորդում է իւր Աշոտ որդին:

Միջանկեալ պատմւած է Տաճատ Անճեացու պատմութիւնը, որին սիրում էր Բաղդատայ Մահմատ թաղաւորը: Տաճատը չիմանալով, սպանում է Մահմետի երկու որդիներից փոքրին և երկիւղ կրելով վրիժառութիւնից, ամբացնում է իւր բերդերը, ինքը փախչում Յունաստան: Նա իբրեւ յոյների հրամանատար, յաղթում է Մահմետի երկրորդ որդուն: Պատերազմի դաշտում նրան ճանաչում է և յոյն զինուորի շորերով ապաստում բերում է իւր տունը: Ապա հետն առած տանում է սղաւոր հօր մօտ և իւր առաջի սպանման համար ներումն ստանալով, պատիւներով վերադառնում իւր հայրենի երկիրը: Մահմետը նրան նշանակում է Հայաստանի հարկաւոր և նրան էին ենթարկւում իշխանն Բաղրատունեաց Աշոտ և Սմալատ Տարօնեցին:

Այս պատմութիւնը ևս մի գեղեցիկ ամբողջութիւն է, հեքի տխրաման:

Տաճատի իշխանութեան եօթներորդ տարին «մալի մի

վաճառական ի քաղաքէն Բաղրատայ... Աէթ, որդի Ազուսէթայ երեկ հասաւ ի աշխահն Խաթանաց», որոնք հաւաքելով ջարդում են Սէթին և փախցնում: Տաճատը ամիրայից հրաման է առնում զնալ «յերկիրս խաթանի և օտ գրէն ծառային իմոյ Սեթայ որ սպանին»: Նրա հետ միանում են նաև Աշոտ Բաղրատունին և Սմաթատ Տարօնեցին, որոնք գաղտնի սպանել են տալիս Տաճատին, որպէսզի շուերեն իրենց հայրենի երկիրը: Ամիրան ուղարկում է նրանց դէմ «ծառայ մի որոյ անուն էր Բուկայ. և լիալ էր գերի ի Յաղրակ գաւառէ, ի գեղջէն որ Մուխլանս կոչեն, որդի իրիցու»: Բուկան աւերում է Վասպուրականը որի Աշոտ իշխանը ամրանում է Նկանայ ամրոցում և թողնելով նրան «հասաւ ի Խովթ և ի Սասունը չկարաց նոցա յաղթել... և սպանին զորդին Տաճատայ, զի նա էր առաջնորդ Բուկայի»: Երեք ասորի յետոյ Բուկան առնում է Նրկանայ քեթղը և «աւորաւ գերի զիշխանն Աշոտ և զքերորդիքն նորա զիշխանակ և իւ մարդ ազատացն նորա և Բ որդի նորա, որոց անուանքն են Համազասպ և Դերէն»: Սորա Սամուր քաղաքում բանտարկւում են 16 տարի:

Տաճկաց աշխարհի վրայ յարձակւում են, «Մաղրիպիկոն և հասին ի դռն Սամառայ»: Քաղաքը նեղն ընկած, լսելով որ բանտարկւած Աշոտը խոստանում է ազատել նրան թշնամիներից, հանել է տալիս բանտից և ուղարկում կուի: Աշոտը յաղթում է ամիրայի թշնամիներին: «Եւ էր օրն կիրակի, և իշխանն Աշոտ ունէր մասն ի սուրբ խաչէն Վառադայ և թաղուցեալ էր զնայ ի վերայ գլխոյն: Դարձաւ զէպի արեւելքն և հտ ծունր և ասաց, տէր Աստուած օգնեայ ինձ, և Նշան սուրբ Խաչի օգնեայ ինձ»: Աշոտը առնում է յաղթութիւնը, բայց ամիրան նորան չի արձակում իւր երկիրը, այլ միայն նրա որդիներին: Նոյն թշնամիները յարձակւում են կրկին անգամ, ամիրան դարձեալ Աշոտին է նրանց դէմ ուղարկում, որը յաղթելուց յետոյ, պատերազմի դաշտից ուղղակի գնում է իւր հայրենիքը:

Որդին լսելով հօր գալուստը, զօրքով է ընդառաջում, զգուշութեան համար զինւում է նաև Աշոտը: Երբ հարնցում են զինուելու պատճառը, նա պատասխանում է. — «Որդիք, մի խաբիք, աւաքութիւն է չի կարեմ այլ վարել ի կապանի և ի բանտ մտել: Այս ի ամ է որ ի նեղութեան և արգելք եմ կացել, և այլ չեմ բաւական»:

Հայր ու որդի հասնում են ի քաղաքն Խանդամաշէն: Այդտեղ են գալիս նաև ամիրայի դեսպանները, որ Աշոտին ընծաներ և նամակ էին բերել:

Այս էլ առասպելաձև ամբողջական պատմութիւն է:

Աշոտին յաջորդում իւր որդի Դերէնը, որ ամուսնացել էր

Աշոտ Բագրատունու դուստր Հրանուշի հետ, որից ունենում է երեք որդի—Աշոտ, Գորգէն, և Վազիկ։ Մեծ որդուն՝ Աշոտին աճականացնում է Ապուսմորվանի դուստր Սեդայի հետ։ Դերէնը թողնում է իւր կին Հրանոյշին և սկսում է կենակցել Հեր և Զարեանդ տաճիկ իշխան Սպուսմորայի գեղեցիկ աղջկայ հետ։

Մեռնում է Աշոտ Բագրատունին։ Նրան յաջորդում է իւր որդի Սմբատը—«այր գոռոզ և պատերազմող և առատամիտ... և կապեց նմայ թագ արքայն հոռոմոց Ռոմանոս... և ընդ ձեռամբ էած զՀայք և զՏայք, զՎիրք և զԱղվանք և զՎրաց դաշտ և զՓարխունք և զԱղսրնիս և զԱրեւիս և զԲագս և զաւան Պարտաւայ... զՓայտակարանն, որ է Տփլիս, զՎաղարշապատ և զԴիլին և զՎայոց ձոր և զՆախջվանն։ Եւ էառ զամրոցն զԷրընջակայ և զԱղաշտերտ և զՎաղարշաւան, որ է Բասեն, զԱպահունիս զՀարք, զՏարաւն։ Եւ շինեաց զամրոցն Խլաթայ, շինեաց և Գաւառն և էառ ամենայն աշխարհն Ասորեան»։

Հրանոյշը գանգատւում է եղբօրը մարգաւտարմունքի մասին—«իմ այրս Դերէնն թողել է գիս և գայլազգի կին մի կուսիրէ ի Հերայ, զդուստրն Ապուսմորայ... զհասարակ տարին գնայ ի հոն կենայ և զամենայն բարիք տանն Վասպուրականի տանի անդ և պատրաստէ նոցա կերակուր»։

Սմբատը նախատում է Դերէնին և ասում է ի միջի այլոց—«եթէ վասն պոռնկութեան այլ իրք ի պէտք են քեզ, կան բազում կանայք աշխարհիդ Վասպուրականի»։ Դերէնը չի լսում և Սմբատը սովորցնում է Ապուսմորայի որդիներին դաւաճանութեամբ սպանել նրան։

Դերէնը բանտարկել էր տուել իւր Աշոտ որդու աներ Ապուսմորվանին։ Նրան իսկոյն ազատում են բանտից և սա ձեռք է գցում Վասպուրականի իշխանութիւնը, իւր փեսայ Աշոտին բանտարկել է տալիս Նկան բերդում, իսկ միւս երկու եղբայրներին իր մօտ պատանդ է պահում։ Սմբատը անուշադիր է թողնում իւր քրոջ որդիների հալածանքը և ընդունում է Ապուսմորվանի հնազանդութիւնը։

Սա ևս առասպելական ամբողջական պատմութիւն է, չափազանց հարուստ ժամանակի բարք ու վարքի և բնաւորութիւնների նկարագրերով։

Սմբատը առնում է «աշխարհն Ղլաթայ» և կամեցաւ ձգել զձեռն իւր ի Միջագետս Ասորոց։ Մաւաւաց տէրն Հապիպ, որդի Սալքայ, պատերազմով գալիս է Սմբատի դէմ։ Սմբատն էլ զօրք է հաւաքում հասնում Ղլաթ, ի դաշտն Մոսկի, հրաւիրելով նաև Ապուսմորվանին։ Իսկ սա դաւաճանել էր և գաղտնի դաշտն կապել Հապիպի հետ։ Սմբատը յանկարծակի գալով, չարաչար յաղթւում և

իւր քրոջ որդի Գաղիկի միջոցով տեղեկանում է Ապուսրովանի նենգութեան մասին։ Նա կանչում է Ամատունեաց տնից հինգ եղբայրներին, որոնց անուններն էին—Կուան, Վահան, Քուրթն, Սարայ, Իգան, այրք քաջք և անուանիք և պատուիրում է սպանել Ապուսրովանին։ Դերէնի որդի Գաղիկը իշխանութեան գլուխն է անցնում։

Միջանկեալ պատմեաւ է Ապուսայլէպայի որդի Պարսից թագաւոր Ալիի անառակութիւնների մասին։ Սրան սպանում է Ապուսէճի որդի Յուսեփ, իւր բնական քնն և կնոջը հասցրած վրէժը լուծելով, դառնում է Պարսկաստանի ամիրապետ և սպառնում է Սմբատին։ Սակայն Սմբատը Գնայ դաշտում յաղթում է նրան։

Սմբատը իւր որդուն Մուշեղին կին է առնում Լակզեց, որ են Ափխազք, Դադոս թագաւորի դստիւր։ Բայց փոքրը յետոյ իւրում է սրա երկրները—Տզկանֆարֆ, զԴոգշէն, զԶայլցեղ, զՆոդ, և զԱրտահանքն։ Դոդաս թագաւորը խորամանկութեամբ գերի է բռնում իւր փեսայ Մուշեղին և Սմբատին առաջարկում յետաւել իրենից զրաւած տեղերը։ Սմբատը լաւ է համարում սխառութեամբ։

Սմբատին օգնութեան են գալիս—Վիշխան յարեւելից Սմալատ բազում զաւրաւք, իշխան Փառիսոյ Հրմակ բազում հեծելաւք, իշխան Աղձնեց Գրիգոր բազում զաւրաւք, իշխան Գորոզվա Վասակ բազում հեծելաւք, իշխան Վայոծորոյ Ապուշամբ բազում զաւրաւք, իշխան Տայոց Գոռամ բազում հեծելաւք, իշխանն Ճողբայց բազում զաւրաւք, իշխանն Տարունոյ Գաղիկ բազում հեծելաւք, իշխանն Վասպուրականի Գորգէն բազում զաւրաւք, իշխան Մոկաց Աշոտ բազում հեծելաւք, իշխանն Անձկացեց Համակար բազում զաւրաւք, իշխանն Կորդվաց բազում հեծելաւք և ի աշխարհէն պարսից այլք բազումք։

Այսբան զօրքով չեն կարողանում առնել «զգեղըն Գաւրի», Գորգէն Արծրունին խորամանկութեամբ բռնում է Ափխազների թագաւորներին և ապատում Մուշեղին։ Թագութիւնից յետոյ Գորգէնը սպասում է վարձատրութեան, չստանալով սպասածը որոշում է փախչել։ Լսում է Սմալատը և շատ է ծիծաղելով։ Թոիկ հաւիւկ Վասպուրականի, մի խռովիւր, տամ քեզ զբերդն Մանգնաւանի և տամ զգաւառն Դաւնոյ։ Գորգէնը վշտացած հեռանում է։ Սրմպատը լսելով բացականչում է. «Թող գնայ ձագն աւձին Դերենի, զոր ես ետու սպանանել որդոցն Ապուսրայի»։ Դերէնի որդիքը որոշում են վրէժ լուծել։

Պատմութիւնը թերատ է զժրախտաբար և չկայ շարունակութիւնը։

Մեզ հասած Սմբատի պատմութիւնն էլ անկախ է և կազ-


ժուլ է մի ամբողջութիւն միայն թէ թերի:

Դիտմամբ ընդարձակ պատմեցինք զբքի բովանդակութիւնը, որովհետեւ ձախող ժամանակների հետեանքով, չէինք կարծում թէ մեզ կյաջողութի շուտ հրատարակել:

Պատմութիւնը սկսւում է Մահմետով և վերջանում է Սմբատ Բագրատունու ժամանակով, պարունակելով համեմատաբար կարճ ժամանակաշրջան:

Այժմ տեաններ, իրաւ սա է Շապուհ Բագրատունու կորած պատմութիւնը, ինչ որ ասել է հանգուցեալ Գալուստր: Մահը վրայ է հասել, նա հիմունքներ չի տուել, կփորձենք կատարել այդ աշխատանքը:

Մեսրոպ Եպիսկ.



ՅՈՎՀԱՆՆԷՍ Ը. ԿԱՐԲԵՑԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

(Կենսագրական տեղեկութիւններ)

Ա. Էջմիածնի Հայրապետական Դիւանը առատ նիւթ ունի հայերի ժէ — Ի. դարու պատմութեան համար:

Դիւանից օգտուողներ եղել են, առաւելագէտ հանգուցեալներ Ա. Երիցեան և Գիւտ Ա. ա. քհ. Աղանեան: Սակայն նրանց քաղածը չնչին մասն է այն նիւթի, որ ամբարուած է Դիւանում: Դժբախտաբար Դիւանի նիւթերը կանոնաւորուած, դասաւորուած ու ցուցակադրուած չեն:

Միայնական կանոնադրութեամբ, որը հաստատուել է Վեհափառ Հայրապետի կողմից 1919 թւի վերջերում, Ա. Էջմիածնում հիմք է դրուել կենդրոնական Դիւանատան, որը պէտք է հետզհետեւ կարգի բերուի:

Ջեւարեկած լինելով իմ հերթին այդ աշխատանքը, գործերը դասաւորելիս ձեռքս անցաւ մի գրութիւն, որը Յովհաննէս Ը. Կաթողիկոսի կենսագրականն է համառօտ:

Համեմատելով Ա. Երիցեանի Կովկասի Հայք XIX-րդ դարում Բ. հատորի այն մասի հետ, որ տեղեկութիւններ է պարունակում Կարբեցու կենսագրութեան վերաբերեալ*), տեսայ, որ այս գրութիւնը նորութիւններ և տարրերութիւններ ունի:

Դիտենալով որ պատմական դէպքերի մասին որքան շատ

*) Տե՛ս Բ. հտ. 99, 402, 450—5 եւ այլն երեսներ: